Հաշվետվություն

ՀՀ Տավուշի մարզպետ Հ. Զոբանյանի Հունգարիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

Հայկ Զոբանյան – ՀՀ Տավուշի մարզպետ

Նոյեմբերի 13-14, Հունգարիայի Հանրապետություն, քաղաք Բուդապեշտ:

2019 թվականի հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ներկայացուցիչ Վլադիմիր Ռախմանինի կողմից նամակ-հրավեր է ուղարկվել ՀՀ Տավուշի մարզպետին՝ մասնակցելու ս.թ. նոյեմբերի 13-14-ին Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում կայանալիք «Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում գյուղական միգրացիայի վերաբերյալ տարածաշրջանային սեմինարին» մասնակցելու համար:

Այցի հիմնական նպատակն էր մասնակցել համաժողովին, որտեղ քննարկվում էր այն թեման, թե ինչպես ներգրավել ազգային, այնպես էլ միջազգային շահագրգիռ կողմերի և գործընկերների՝ բարձրացնելով միգրացիոն խնդիրների ընկալումը գյուղական զարգացման տեսանկյունից, ինչպես նաև իրականացնել վերլուծություն տարածաշրջանի տարբեր երկրներում առկա քաղաքականությունն ու ծրագրերը՝ կապված գյուղական միգրացիայի հետ գնահատելու նպատակով:

Այցը արդյունավետ էր, որտեղ մանրամասն քննարկվեցին գյուղական շրջանների վրա միգրացիոն գործընթացների ազդեցությունները, դրանց հիմնական պատճառները, կարգավորման և կանխարգելման մեխանիզմները: Խնդիրները քննարկվեցին միջավայրերի ներգործության տարբեր տեսանկյուններից՝ սոցիալական, տնտեսական, բնապահպանական, մշակութային և այլն: Ներկայացվեցին տարբեր երկրներում իրականացված հաջողված ծրագրեր, որոնք կիրառելի կարող են լինել նաև Հայաստանի, մասնավորապես Տավուշի մարզի համար:

Այցի ընթացքում Հայաստանի Հանրապետության վերաբերյալ առանձին քննարկումներ եմ ունեցել Սննդի և գյուղատնտեսության կազմակերպության, Միգրացիայի միջազգային կազմակերպության, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ՎԶԵԲ-ի, Ասիական զարգացման բանկի պատասխանատուների, ծրագրերի ղեկավարների, փորձագետների հետ:

Հաշվի առնելով Տավուշի մարզի գյուղերում տնտեսական զարգացման հեռանկարների համար մարդկային ռեսուրսի խիստ անբավարար վիճակը, ինչպես նաև արտերկրում, հատկապես Ռուսաստանի Դաշնությունում մեծ քանակով մեր հայրենակիցների առկայությունը, հնարավորություն ունեցանք քննարկված մոդելները դիտարկել մեր իրական տվյալների հիման վրա:

Ձեռք է բերվել պայմանավորվածություն մի շարք ծրագրեր Հայաստանի Հանրապետությունում կիրառելու հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև առաջիկա ծրագրերում Տավուշի մարզի ներգրավման հնարավորությունները և այլ հարցեր:

Ակնկալվում է համագործակցությունն ավելի գործնական հենքերի վրա դնել, որի նպատակով հանձնարականներ է տրվել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՉՈԲԱՆՅԱՆ